

## ԿԱՆՈՆ

### ՄՐԵՌԵՆ ԲԱՐՍԴԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՆ

ՕՐԵՆՈՒԹԻՒՆ ԲԿ.

**Ս**ամօր օծութեամբ թագաւոր արքական տիկին առեալ տոհմիս, թագաւորեաց Տէրն և թագաւոր . թագ առաջ առաջ առաջնակացիդ արքայութեան երաշէնից կապեաց հովուել զհօտ իւր բանաւոր, հայր Բասիլիոս, մազթեա առ Յիսուս:

**Պ**ամից երկնայնոց անմարմնական գաւուց մարմնով հաղորդեալ, զկարդը հրեշտակական վարուց օրինակաւ անձին մարդկան կանոնեալ. հայր Բասիլիոս:

**Ք**ահանայական պատմուճանքը վայելչացեալ, ոգւով զգեցեալ զմիրիստոս, զմարմին ի հոգի ոգեսորզ ծածկեալ չնորհօք, Ոգասոյն աղբիւր մշտահոս, հայր:

**Ա**նշարժ հաւատոց քարոզ, հրեղէն լեզու ճշմարտութեան, խարիսխ լեռնացեալ նոր հսրայէլի, սիւն բոցեղէն ուզզիչ յերկրէ յերկրնա համբարձեալ, հայր:

**Ա**յսօր զոր ծնար մարդ ճշմարիտ բընութեամբ, հրեշտակը յերկնից Աստուած ծանուցին զէիցս Արարիչ, ներմարդանալ հարքն ի յերկրի քեքարոզեցին. ընդ նոսին այսոր զքեզ կոյադ երանեմք:

+ **Հ**զօր թագաւորդ երկնաւոր, զգեցար մարմին երկրաւոր, ճշմարտելով յանձին՝ զբնութիւն ծառայական, լցուցեր հնազանդելով Զօր քոյ զօրէնս ստուերական. նոր պատութեան օրինաց՝ օրինադրող

կարգաց ցուցեր զբասիլիոս առըբ եկեղեցւոյ:

**Ե**ղեր մարդ հնազանդ հօր՝ մարդկան զուգակից, որ Եսդ Աստուած ծնուղիդ էակից մնօրինաբար եղեր ընդքեզ, Յիսուս, ի նոր յայս Գաղդազայ, կորել զյաւելուածս հերձուածոյ սրտիցն անթրիփատից, զանիրշրելի վէմն գայլախազեայ զբասիլիոս:

**Ծ**ժափեալ իւղ զանուն քո բուրեալ, որ հաւատոց և վարուց թեւաք այսօր ամբարձեալ՝ որպէս մեղու զաստուածաշունչ գրախտի ծալիկս հաւափեալ, որ վեհ Մովսէսի զցշմարիտ հացդ ի յերկնից եռ նոր իսրայելի զհօր պատահագի:

**Ո**ր քոյդ միածնի զիշխանն աշխարհի կործանելով, Տիրուհի. դու նոյն կրկին հայցմամբն Բասիլի երեւեալ հրաման տայիր խոցուել չարին բռնաւորի զինուն Մերկեռէի:

**Ո**գաւոց սովուն մահացու, Բասիլիոս նոր հացատու, զբան հաւատոյն սիոնեցեր, զազտ հերձուածոց վանցեցեր:

**Ի**իւծեալ ցաւոց փարատիչ, քաղցեալ անձանց կերակրիչ այրեաց գթածդ այցելու, որբոց հայր և խնամածու:

**Մ**աքրեալ յախտից նիւթական, Երրորդութեանն օթարան, հրեղէն սիւն Բասիլիոս՝ լել բարեխօս առ Քրիստոս:

**Մարդկան աղինք քեւ փրկեալ, այսօր զուարթնոցն երգակցեալ՝ դոչինք ողջոյն քեզ բրդկրեալ, Աստուածածին երանեալ:**

ՀԱՐՑ Դ Զ

**ՈՐ զնախնեաց հարցն առ որդիս գործ պահնելեաց նորոգեցեր յաշխարհանեղեղ հերձուածոցն ալիս, հայր աշխարհի զբասիլոս յեկեղեցւոյ տապան աճման հաւատոյ սերմն պահեցեր, աղաշնօք սորակեցո զմեզ, Տէր Աստուած հարցն մերոց :**

**ՈՐ զուղափառ հաւատոս օրհնիչ կըրկին նորոգ Աբրահամին յազգս սըփուեցեր. երրեակիդ անձանց բնութեան միութիւն ի սուրբ սրտին խորան յայտնեալ, զեկեղեցին ամուլ՝ նովաւ բազմորդի գոլ աւետեցեր. աղաշմնք :**

**ՈՐ ի բոլոր սրբոց խորհուրդ գերիս մանկունսն ի հրոյն ապրեցուցեր. ի բազմապատիկ փորձութեանցն, հուր՝ առի հանդէս մարտիցն ամուր զբասիլոս պահեալ, զրոցն եկեղեցւոյ նովին զուարթնովն ի ցող փոխեցեր. աղաշան :**

**ԶՃէր օրհնեցէք բարձր (ար)արէք զնա յաւիտեան :**

**ՈՐ հօտին իւրոյ զգեհեր մահուն սպառնացեալ հայցմասիր ի տիւ լուսոյ փոխարկեաց, և ընդ դաւթի զշարըն պարսեաց. զՃէր օրհնեցէք :**

**ՈՐ զաղբիւր գրախտի չնորհաց ողույն վլատակաց, գետս ի սրտէ բըդիւնաց ջուր կենաց, և զքառակոյս վայրս առողեաց. զՃէր օրհնեցէք :**

**ՈՐ հսրայեին նորոյ յայտնեալ Եղիսյ կրկին. ետուր յերկնից նոր ողջակիցին ի սուրբ խորհուրդն իջեալ զորին. զՃէր :**

Ո Ղ Ո Ր Ե Ա Դ Կ

**ՈՐ կըրկնակի Ոգւոյդ իջմամիր ի Յորդանան, Հօր յայտնութեամիր զբա-**

**սիլիոս Ոգւոյդ օծեր, և միածնիդ կցորդեցեր. բարեխօսութեամբ սուրա ողորմեա մեզ Հայր Աստուած :**  
**Զոր աշխարհի լոյս ծագեցեր, եկեղեցւոյ պարհսպ արկեր. բանիւ պըսակ հայրապետաց, վարուք սահման ճգնաւորաց. բարեխօսութեամբ սուրա ողորմեա մեզ, Որդի Աստուածոյ :**  
**Որ զծածուկ խորս անյատից՝ մեկնեաց բանից մարդարէից. զառաքելոցն զշափ ելից՝ զաշխարհ մաքրեաց՝ ի յաղանդից. բարեխօսութեամբ սորա ողորմեա մեզ, Ոդի Աստուածոյ :**

**ՈՐ զըռ որդին Հօր էակից՝ ծանոյց Աստուած արարշակից. համարմութիւն Որդւոյ զՈդին և զմայրդ որդւոյ՝ Աստուածածին, առքեզ մաղթանօք նորա՝ բարեխօսեա վասն մեր, ով կըս :**

Ճ Է Ր Ց Ե Ր Կ Ն Ի Ց

**Այսօր ընդ անմարմնոց զօրմն յերկին, մարմնով հրեշտակն երկնային Բասիլիոս, վերամբարձեալ և սորովքիցն երգակցեալ :**

**Այսօր զքանոնն հաւատոյ կարգաց սուրբ եկեղեցւոյ՝ վերընկալան ժողովքըն հարա(ն)ց յեկեղեցին անդրանկաց :**

**Այսօր հովիւն անբիծ հօտից, մեծ քահանանյն վշտակից, ի սուրբ սրբոցն մտանէ, ընդ վարագդոյրն անցանէ :**

**Այսօր քարոզ երրորդութեան բանին մարմնոյ ի սեղան, մերձեալ մեզ միշտ քահանայէ, զքրտունս արեան ընծայէ :**

**Այսօր խորոց Ոգւոյն մեկնող լեզուն հրեկէն թարգմանող զանձառելինն, յերկնից Փայլէ, ընդ լուսաւորսն ծագէ :**

**Այսօր բերան աստուածաբան զուարթունն անմահ օրհնաբան, յեկեղեցիս միշտ կենդանի, ընդ հերձուածողն կագի :**

**Այսօր որ բան հայրապետաց, հան-**

դիսագիր ճգնողաց . զկրօնից "լ-  
դիս միշտ կանոնէ , բազմօք յերկինս  
պարէ :

**Այսօր որդւոյն քոյ ախոյեան վկայն**

Քո՞ զԱստուած ծննդեան հայր , ընդ-  
որդւոց քեզ երգէ , փառք ի բար-  
ձունս դրուատէ :

## ՀԻՆ ՔՆԱՐ

### ՏԱՂ ՍՐԲՈՅԵՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ

**Վ**պ պըսակըդ պարծանաց սուրբդ առաջին մարտիւրոսաց ,  
ի սկըզբանըն նախընթաց բոլոր ամեն սարկաւագաց .  
Կենդանի պատարագաց Հօր հաշուոթիւն վասըն մեղաց ,  
Ըզփակեալն ըզնախահայրն որ է կապեալ ընդ յանցանաց ,  
Բացեր գըմա դու զառադասադ , որ ես յաղթողըդ պարծանաց ,  
Եւ զՄրդի արժանացեալ ընդ Հօր տեսեր յաթոռ փառաց ,  
Ծունր եղեալ դու հայցէիր ըզթողութիւն անօրինաց  
Ամբոխ որ ժողովեալ են վասըն քո խազմարարաց :  
Զքարանց ըզրազմութիւնսն որպէս զօդոց չիթս անձրեաց ,  
ի քեզ հաւաքէիր՝ որպէս ծաղիկ բուրաստանաց ,  
Ցունկ անմահ իմանալի մերձեալ ի լոյս տեսանողաց ,  
Ո՞վ վըկայ անսունելի անճառելի մարմնաւորաց .  
Ռաբունացն լեր բարեխօս որ մեզ բանայ զդուռըն կենաց ,  
Առ թագաւորն թագաւորաց որ վասըն քո ուխտաւորաց .  
Զի և մեզ ողորմե(ս)ցի յաւուրն ահեղ դատաստանաց ,  
ի դոչել քարը(ի)ելեան հարկանելով զիողըն կենաց ,  
ի յելանել ձայնի փողոցն անդըր ինի ժողով բազմաց .  
Խաշն երեխ յառաջազոյն ճառապայթեալ ի լոյս փառաց .  
Թագաւորն իջեալ բազմի աթոռ դընի դատաստանաց .  
Զըւարթնոց դասքըն յայտնեալ և երեխն գունդք հրեշտակաց .  
Առաքեալքըն ցընծասցեն քո հետեւեալ շաւղի կենաց ,  
Զի յառաջ քան ըզնոսս տեսեր զիսորանա երկնից ի բաց .  
Ասելով քարկոծողաց , Ահա տեսի զերկինս ի բաց .  
Որ դու առեր ըզգօրս երկնից բերեր ի խոր պատուաւորաց .  
Զեռամբն ակնարկելով ըզքեզ եցոյց երկնից զօրաց .  
Ցեսանէք զիմ սիրելին , որ է ուղի սըրբոց բազմաց .  
Ծնդ նայն շաւղի հետեւեցին երամք անթիւ մարտիրոսաց .  
իմ վասըն այնըր խոնարհեալ իջի յերկիր հողեղինաց .  
Յարգանդ կուսին ես բնակեցա(j) , զգեցայ զմարմին մահկանացուաց .  
Զամենայն կատարեցի որ ըստ մարմնոյ , բաց ի մեղաց ,  
Զիորհուրդ տնօրէնութեան ի գլուխ հանի ըստ իմում կամաց .  
Դիմեցի յերուաղէմ գոլով ի տուն չարչարանաց ,